ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2017 թվականի **թիվ 140** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային գործառնությունների կատարման հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 274-րդ հոդվածի 6-ին կետին եւ 275-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կցվող՝

Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում գտնվելու ժամկետը երկարաձգելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգը:

Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը եւ (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը փոխանցելու մասին Եվրասիական տնտեսական միության անդամ պետության մաքսային մարմնին ծանուցելու կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի նոյեմբերի 7-ի
թիվ 140 որոշմամբ

ԿԱՐԳ

Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում գտնվելու ժամկետը երկարաձգելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման

1. Սույն կարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 274-րդ հոդվածի 6-րդ կետի իրագործման նպատակներով, եւ դրանով սահմանվում է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքում գտնվելու՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության մաքսային մարմնի (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություն, մաքսային մարմին) կողմից Օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-3-րդ կետերին համապատասխան սահմանված ժամկետը (այսուհետ՝ ժամանակավոր ներմուծման ժամկետ) երկարաձգելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման հաջորդականությունը:

2. Սահմանված ժամկետում ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման անհնարինության դեպքում փոխադրողը կամ այն անձը, որի տիրապետմանն է փոխանցվել այդ տրանսպորտային միջոցը՝

Օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդից չորրորդ պարբերություններին համապատասխան, կամ այլ շահագրգիռ անձ (այսուհետ՝ անձ) մինչեւ ժամանակավոր ներմուծման սահմանված ժամկետը լրանալը, եթե այլ բան նախատեսված չէ սույն կետի երկրորդ պարբերությանը համապատասխան, Միության մաքսային տարածքից այդ տրանսպորտային միջոցի հետադարձ արտահանման անհնարինության պատճառները վերացնելու համար անհրաժեշտ ժամանակով ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու մասին (էլեկտրոնային փաստաթղթի, ազատ ձեւով կազմված թղթային կրիչով փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի էլեկտրոնային պատճենի ձեւով) պատճառաբանված հարցում (այսուհետ՝ հարցում) է ուղարկում այն մաքսային մարմին, որը լիազորված է կատարելու սույն կարգի 1-ին կետում նշված մաքսային գործառնությունները, եւ որի գործունեության տարածքում է գտնվում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը:

Հարցումը կարող է ուղարկվել ժամանակավոր ներմուծման սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի թույլատրվում անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու համար անձի փաստացի ժամանելը եւ (կամ) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը ներկայացնելը նշված մաքսային մարմին պարտադիր չէ:

3. Հարցումը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝

ա) հարցում ուղարկած իրավաբանական անձի, իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) լրիվ կամ կրճատ (կրճատված) անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

բ) հարցում ուղարկած անձի հարկային համարը (առկայության դեպքում).

գ) հարցում ուղարկած ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի անվանումն ու վավերապայմանները (սերիան (առկայության դեպքում), համարը).

դ) հարցում ուղարկած իրավաբանական անձի, կազմակերպության գտնվելու վայրի հասցեն (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը եւ այլն), բնակավայրը, փողոցը, շենքի համարը, մասնաշենքի (շինության) համարը, բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը) կամ ֆիզիկական անձի բնակության վայրի հասցեն.

ե) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի անվանումը (մակնիշը, մոդելը) եւ (կամ) գրանցման (նույնականացման) համարը.

զ) տրանսպորտային միջոցի այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը ժամանակավոր ներմուծվել է Միության մաքսային տարածք.

է) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման ժամկետը՝ օօ/աա/տտ ձեւաչափով (օրացուցային տարվա օրը, ամիսը, տարեթվի վերջին երկու թվերը).

ը) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի երթուղին՝ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերին եւ (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների՝ տրանսպորտի բնագավառում կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված՝ փոխադրողի մյուս ստանդարտ փաստաթղթերին համապատասխան.

թ) ժամանակավոր ներմուծման ժամկետում ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման անհնարինության պատճառները.

ժ) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքից հետադարձ

արտահանման անհնարինության պատճառները վերացնելու համար անհրաժեշտ ժամանակը՝ դրա հիմնավորմամբ.

ժա) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը.

ժբ) հարցման ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնելու՝ հարցումն ուղարկած անձի համար նախընտրելի եղանակը (էլեկտրոնային փոստով, հեռախոսով եւ այլն):

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված մաքսային մարմին հարցման հետ ներկայացվում են նաեւ հետեւյալ փաստաթղթերը (թղթային կրիչով փաստաթղթերի պատճենները, էլեկտրոնային փաստաթղթերը եւ (կամ) թղթային կրիչով փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները)՝

ա) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը եւ (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների՝ տրանսպորտի բնագավառում կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված՝ փոխադրողի մյուս ստանդարտ փաստաթղթերը.

բ) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի նկատմամբ անձի լիազորությունները հաստատող փաստաթղթերը.

գ) հարցումն ուղարկելու պատճառները հաստատող փաստաթղթերը (անձի մոտ այդպիսի փաստաթղթերի առկայության դեպքում).

դ) տրանսպորտային միջոցի հայտարարագիրը (եթե տրանսպորտային միջոցի հայտարարագիրը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր օգտագործվել է գնացքային փոխանցման ամփոփագիրը (միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի եւ (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցի վրա փոխադրվող բեռնարկղի մասով):

5. Մաքսային մարմինը հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն հարցումը ստանալու պահից մաքսային մարմնի 1 աշխատանքային ժամից ոչ ուշ, գրանցում է մուտքագրված հարցումը՝ գրանցման համար տալու միջոցով՝ օգտագործելով մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը:

Այն դեպքում, երբ հարցումը նշված մաքսային մարմին է ներկայացվել ժամանակավոր ներմուծման սահմանված ժամկետը լրանալուց հետո, եւ այդ մաքսային մարմնի կողմից ընդունվել է որոշում՝ ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, եթե դա թույլատրվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմին ներկայացվել է հարցումը, ապա այդ մաքսային մարմինը ժամանակավոր ներմուծման սահմանված ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից երկարաձգում է ժամանակավոր ներմուծման ժամկետը:

6. Մաքսային մարմինը մերժում է ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելը հետեւյալ դեպքերում՝

ա) հարցումը ներկայացվել է այն մաքսային մարմին, որը լիազորված չէ սույն կարգի 1-ին կետում նշված մաքսային գործառնությունները կատարելու համար, եւ (կամ) միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցը չի գտնվում նրա գործունեության տարածքում.

բ) հարցումը ներկայացվել է մաքսային մարմին ժամանակավոր ներմուծման սահմանված ժամկետը լրանալուց հետո (այն դեպքում, երբ ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը չի թույլատրվում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմին ներկայացվել է հարցումը).

գ) հարցումը ներկայացվել է ոչ լիազորված անձի կողմից.

դ) հարցումը չի պարունակում սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկությունները (բացառությամբ սույն կարգի 3-րդ կետի «ժբ» ենթակետում նշված տեղեկությունների).

ե) հարցմանը չեն կցվել սույն կարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերը:

7. Ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում սույն կարգի 2-րդ կետում նշված մաքսային մարմնի պաշտոնատար անձը հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն այդ հարցումը գրանցելու պահից մաքսային մարմնի 3 աշխատանքային ժամից ոչ ուշ՝

ա) մաքսային մարմնի տեղեկատվական համակարգում էլեկտրոնային ձեւով կազմում է ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ տեղեկատվություն պարունակող հաղորդագրություն, որն ուղարկվում է անդամ պետության՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման նկատմամբ հսկողություն իրականացնող մաքսային մարմին, եւ պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի անվանումը (մակնիշը, մոդելը) եւ (կամ) գրանցման (նույնականացման) համարը,

տրանսպորտային միջոցի այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը ժամանակավոր ներմուծվել է Միության մաքսային տարածք,

ժամանակավոր ներմուծման ժամկետում Միության մաքսային տարածքից ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի հետադարձ արտահանման անհնարինության պատճառները,

ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը,

այն ամսաթիվը օօ/աա/տտ ձեւաչափով (օրացուցային տարվա օրը, ամիսը, տարեթվի վերջին երկու թվերը), մինչեւ որը երկարաձգվել է ժամանակավոր ներմուծման ժամկետը.

բ) մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ կազմում եւ անձին ուղարկում է ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային փաստաթուղթ կամ տրանսպորտային միջոցի հայտարարագրի վրա (այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի հայտարարագիրը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով) կամ հարցման վրա (այն դեպքում, երբ հարցումն ուղարկվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով կամ որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր օգտագործվել է գնացքային փոխանցման ամփոփագիրը) կատարում է «Ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգվել է մինչեւ...» նշումը՝ օօ/աա/տտ ձեւաչափով (օրացուցային տարվա օրը, ամիսը, տարեթվի վերջին երկու թվերը)՝ նշելով այն ամսաթիվը, մինչեւ որը երկարաձգվել է ժամանակավոր ներմուծման ժամկետը, եւ այդ նշումը հաստատում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ համարակալված անձնական կնիքի դրոշմվածքով.

գ) անձին տեղեկացնում է ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու եւ ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու մասին նշում պարունակող՝ տրանսպորտային միջոցի հայտարարագիր ստանալու հնարավորության մասին (այն դեպքում, երբ տրանսպորտային հայտարարագիրը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով): Այն դեպքում, երբ համապատասխան որոշումն ընդունելու օրվան հաջորդող՝ մաքսային մարմնի 1 աշխատանքային օրվա ընթացքում անձը չի ժամանում ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու մասին նշում պարունակող՝ տրանսպորտային միջոցի հայտարարագիր ստանալու համար, մաքսային մարմինն այդ հայտարարագիրն ուղարկում է պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ փոխանցում է տրանսպորտային միջոցի այդ հայտարարագիրը ստանալու փաստը հաստատելու հնարավորություն նախատեսող այլ եղանակով.

դ) պատրաստում է (անհրաժեշտության դեպքում) ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու մասին նշում պարունակող՝ տրանսպորտային միջոցի հայտարարագրի պատճենը՝ մաքսային մարմնի գործերում այն պահելու համար (այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի հայտարարագիրը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով):

8. Ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում այն մաքսային մարմինը, ուր ներկայացվել է հարցումը, հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն հարցումը գրանցելու պահից մաքսային մարմնի 3 աշխատանքային ժամից ոչ ուշ՝

ա) մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ կազմում եւ անձին ուղարկում է ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու վերաբերյալ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային փաստաթուղթ կամ տրանսպորտային միջոցի հայտարարագրի վրա (այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի հայտարարագիրը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով) կամ հարցման վրա (այն դեպքում, երբ հարցումն ուղարկվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով կամ որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր օգտագործվել է գնացքի փոխանցման ամփոփագիրը) կատարում է «Ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժվել է» նշումը, եւ այդ նշումը հաստատում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ համարակալված անձնական կնիքի դրոշմվածքով.

բ) անձին տեղեկացնում է ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու եւ ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու մասին նշում պարունակող՝ տրանսպորտային միջոցի հայտարարագիր ստանալու հնարավորության մասին (այն դեպքում, երբ տրանսպորտային հայտարարագիրը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով): Այն դեպքում, երբ համապատասխան որոշումն ընդունելու օրվան հաջորդող մաքսային մարմնի 1 աշխատանքային օրվա ընթացքում անձը չի ժամանում

ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու մասին նշում պարունակող՝ տրանսպորտային միջոցի հայտարարագիր ստանալու համար, մաքսային մարմինն այդ հայտարարագիրն ուղարկում է պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ փոխանցում է տրանսպորտային միջոցի այդ հայտարարագիրը ստանալու փաստը հաստատելու հնարավորություն նախատեսող այլ եղանակով.

գ) պատրաստում է (անհրաժեշտության դեպքում) ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու մասին նշում պարունակող՝ տրանսպորտային միջոցի հայտարարագրի պատճենը՝ մաքսային մարմնի գործերում այն պահելու համար (այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի հայտարարագիրը ներկայացվել է թղթային կրիչով փաստաթղթի ձեւով):

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի նոյեմբերի 7-ի
թիվ 140 որոշմամբ

ԿԱՐԳ

Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը եւ (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը փոխանցելու մասին Եվրասիական տնտեսական միության անդամ պետության մաքսային մարմնին ծանուցելու

1. Սույն կարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 275-րդ հոդվածի 11-րդ կետի իրագործման նպատակներով, եւ դրանով սահմանվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության մաքսային մարմնին (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություն, մաքսային մարմին) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը եւ (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը (այսուհետ՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոց) Միության մաքսային տարածքում անդամ պետության երկաթուղային փոխադրողի կողմից փոխադրման պայմանագրին համապատասխան ապրանքներն ստացող անձին (այսուհետ՝ ստացող) կամ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման նպատակով այդ ստացողից անդամ պետության

երկաթուղային փոխադրողին կամ մեկ այլ փոխադրողի փոխանցելու մասին ծանուցելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման հաջորդականությունը, ինչպես նաեւ այդ ծանուցման ժամկետները:

2. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը փոխանցելու դեպքում այդ տրանսպորտային միջոցը փոխանցող անձը հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն մաքսային մարմնի 1 աշխատանքային օրվանից ոչ ուշ, ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը փոխանցելու մասին (էլեկտրոնային փաստաթղթի ձեւով) ծանուցում (այսուհետ՝ ծանուցում) է ուղարկում այն մաքսային մարմին, որը լիազորված է կատարելու սույն կարգի 1-ին կետում նշված մաքսային գործառնությունները, եւ որի գործունեության տարածքում է գտնվում ստացողը՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքի:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ազատ ձեւով կազմված ծանուցում ուղարկելը թույլատրվում է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի փոխանցումն իրականացնելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը փոխանցելու մասին ծանուցելիս ծանուցումն ուղարկած անձի փաստացի ժամանումը եւ (կամ) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը նշված մաքսային մարմին ներկայացնելը պարտադիր չէ:

3. Ծանուցումը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝

ա) իրավաբանական անձի, իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) լրիվ կամ կրճատ (կրճատված) անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), այդ թվում՝ նշելով ժամանակավոր

ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի փոխանցումն իրականացրած նշանակման երկաթուղային կայարանների անվանումները (առկայության դեպքում).

բ) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը փոխանցած անձի հարկային համարը (առկայության դեպքում).

գ) իրավաբանական անձի, կազմակերպության գտնվելու վայրի հասցեն (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը եւ այլն), բնակավայրը, փողոցը, շենքի համարը, մասնաշենքի (շինության) համարը, բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը) կամ ֆիզիկական անձի բնակության վայրը, այդ թվում՝ նշելով ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի փոխանցումն իրականացրած նշանակման երկաթուղային կայարանների (առկայության դեպքում) գտնվելու վայրի հասցեն.

դ) ծանուցում ուղարկած անձի կոնտակտային տվյալները (էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսը).

ե) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի գրանցման (նույնականացման) համարը.

զ) տրանսպորտային միջոցի այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը ներմուծվել է Միության մաքսային տարածք.

է) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման ժամկետը՝ օօ/աա/տտ ձեւաչափով (օրացուցային տարվա օրը, ամիսը, տարեթվի վերջին երկու թվերը).

ը) փոխադրման պայմանագրի վավերապայմանները (երկաթուղային բեռնագրի կամ միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրի («CMR») համարն ու ամսաթիվը) (ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցն ավտոմոբիլային փոխադրողին փոխանցելու դեպքում).

թ) իրավաբանական անձի, կազմակերպության լրիվ կամ կրճատ (կրճատված) անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), այդ թվում՝ այն երկաթուղային կայարանի անվանումը (առկայության դեպքում), որոնց փոխանցվել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը.

ժ) այն անձի հարկային համարը (առկայության դեպքում), որին փոխանցվել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը.

ժա) իրավաբանական անձի, կազմակերպության գտնվելու վայրի հասցեն (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը եւ այլն), բնակավայրը, փողոցը, շենքի համարը, մասնաշենքի (շինության) համարը, բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը) կամ ֆիզիկական անձի բնակության վայրի հասցեն, այդ թվում՝ նշելով այն երկաթուղային կայարանի (առկայության դեպքում) գտնվելու վայրը, որոնց փոխանցվել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված մաքսային մարմին ծանուցման հետ միասին ներկայացվում են ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի փոխանցման հիմքերը հաստատող փաստաթղթերը (երկաթուղային փոխադրողի կամ ստացողի կողմից հաստատված՝ թղթային կրիչով փաստաթղթերի պատճենները կամ էլեկտրոնային փաստաթղթերը եւ (կամ) թղթային կրիչով փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները):

5. Սույն կարգի 2-րդ կետում նշված մաքսային մարմինը՝

ա) մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ գրանցման համար տալու միջոցով գրանցում է ծանուցումը հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն այդ ծանուցումը ստանալու պահից մաքսային մարմնի 1 աշխատանքային ժամից ոչ ուշ.

բ) հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն ծանուցումը գրանցելու պահից մաքսային մարմնի 3 աշխատանքային ժամից ոչ ուշ, մաքսային մարմնի տեղեկատվական համակարգում կազմում է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը փոխանցելու վերաբերյալ տեղեկատվություն պարունակող հաղորդագրություն, որն ուղարկվում է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ անդամ պետության մաքսային մարմին եւ պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

իրավաբանական անձի, կազմակերպության լրիվ կամ կրճատ (կրճատված) անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), այդ թվում՝ նշելով ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի փոխանցումն իրականացրած նշանակման երկաթուղային կայարանների (առկայության դեպքում) անվանումները.

ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը փոխանցած անձի հարկային համարը (առկայության դեպքում).

իրավաբանական անձի, կազմակերպության գտնվելու վայրի հասցեն (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը եւ այլն), բնակավայրը, փողոցը, շենքի համարը, մասնաշենքի (շինության) համարը, բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը) կամ ֆիզիկական անձի բնակության վայրը, այդ թվում՝ նշելով ժամանակավոր ներմուծված միջազգային

փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի փոխանցումն իրականացրած նշանակման երկաթուղային կայարանների (առկայության դեպքում) գտնվելու վայրը.

ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի գրանցման (նույնականացման) համարը.

տրանսպորտային միջոցի այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը ժամանակավոր ներմուծվել է Միության մաքսային տարածք.

փոխադրման պայմանագրի վավերապայմանները (երկաթուղային բեռնագրի կամ միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրի («CMR») համարն ու ամսաթիվը) (ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցն ավտոմոբիլային փոխադրողին փոխանցելու դեպքում).

իրավաբանական անձի, կազմակերպության լրիվ կամ կրճատ (կրճատված) անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), այդ թվում՝ այն երկաթուղային կայարանի անվանումը (առկայության դեպքում), որոնց փոխանցվել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը.

այն անձի հարկային համարը (առկայության դեպքում), որին փոխանցվել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը.

իրավաբանական անձի, կազմակերպության գտնվելու վայրի հասցեն (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը եւ այլն), բնակավայրը, փողոցը, շենքի համարը, մասնաշենքի (շինության) համարը, բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը) կամ ֆիզիկական անձի բնակության վայրի հասցեն, այդ թվում՝ նշելով այն երկաթուղային կայարանի (առկայության դեպքում) գտնվելու վայրը, որոնց փոխանցվել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը:

6. Սույն կարգի 2-5-րդ կետերով նախատեսված մաքսային գործառնությունների կատարում չի պահանջվում ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ անդամ պետության երկաթուղային փոխադրողի կողմից ստացողին կամ այդ ստացողից անդամ պետության երկաթուղային փոխադրողին հետադարձ փոխանցման դեպքում՝ պայմանով, որ երկաթուղային փոխադրողն օգտագործի ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների ավտոմատ հաշվառման համակարգը, որում գրանցվում է փոխանցման փաստը, եւ այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում իրականացվում է փոխանցումը, սահմանվի երկաթուղային փոխադրողի կողմից մաքսային մարմին այդ համակարգից տեղեկատվություն ներկայացնելու կարգը՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքում գտնվելու եւ այն օգտագործելու պայմանների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակներով:

Սույն կարգի 5-րդ կետի «բ» ենթակետի առաջին պարբերության մեջ նշված տեղեկատվությունը չի փոխանցվում, եթե միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ անդամ պետության մաքսային մարմինը եւ այն անդամ պետության մաքսային մարմինը, որտեղ ներկայացվել է ծանուցումը, իրականացնում են հսկողություն՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքում գտնվելու եւ այն օգտագործելու պայմանների պահպանման նկատմամբ էլեկտրոնային ձեւով հարցումներ կազմելու եւ որպես դրանց պատասխաններ՝ տեղեկություններ ստանալու միջոցով համապատասխան մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի կիրառմամբ: